ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 98

«10» 11 2022 թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 44 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2019 թվականի սեպտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության դատախազության կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2007 թվականի հունիսի 29-ի N 43 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 39 հրամանը, Անահիտ Մանասյանին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ նշանակելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի՝ 2022թ. նոյեմբերի 8-ի N 413-Ա հրամանը, ելնելով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի և նրա տեղակալների միջև աշխատանքի հավասարաչափ բաժանում և ծանրաբեռնվածություն ապահովելու անհրաժեշտությունից, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասով, 2-րդ մասի 2-րդ և 7-րդ կետերով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի՝ «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի, նրա տեղակալների և գլխավոր դատախազության ավագ դատախազի և դատախազների միջև աշխատանքի բաժանում կատարելու ու Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2018 թվականի ապրիլի 10-ի N 28 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» 2019 թվականի սեպտեմբերի 25-ի N 44 հրամանում (այսուհետ՝ Հրաման) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Հրամանի 1-ին կետի 1-ին ենթակետի գ. պարբերության մեջ «վարչության աշխատանքները» բառերից հետո ավելացնել «բացառությամբ սույն հրամանի 1-ին կետի 4.1-ին ենթակետի բ. պարբերությամբ նախատեսված դեպքերի» բառերը,

2) Հրամանի 1-ին կետի 1-ին ենթակետում ավելացնել նոր պարբերություն՝ հետևյալ բովանդակությամբ.

«ը) համակարգում և վերահսկում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեում

մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության աշխատանքները:»:

3) Ուժը կորցրած ճանաչել Հրամանի 1-ին կետի 3-րդ ենթակետի ա. պարբերությունը,

4) Ուժը կորցրած ճանաչել Հրամանի 1-ին կետի 4-րդ ենթակետի դ., զ. և է. պարբերությունները,

5) Հրամանի 1-ին կետում ավելացնել նոր՝ 4.1-ին ենթակետ հետևյալ բովանդակությամբ.

«**4.1) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ Անահիտ Մանասյանը՝**

ա. համակարգում և վերահսկում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության աշխատանքները, ինչպես նաև միջազգային-իրավական համագործակցության ոլորտը,

բ. համակարգում և վերահսկում է Հայաստանի Հանրապետության դատախազության իրավական ապահովման ոլորտը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի կողմից անմիջականորեն Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչությանը տրված հանձնարարությունների,

գ. ղեկավարում և համակարգում է Հայաստանի Հանրապետության դատախազության «Օրինականություն» գիտագործնական և ուսումնամեթոդական հանդեսի խմբագրական խորհրդի ու գլխավոր խմբագրի աշխատանքները,

դ. համակարգում է Արդարադատության ակադեմիայի՝ Հայաստանի Հանրապետության դատախազությանն առնչվող աշխատանքները:»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, ավագ դատախազին և դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

Ա. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ